Մարօն լոացել եւ փաթաթել էր իր վէրքը, երբ ես մօտեցայ նրան:

— Գիտե՞ս ով էր այն աղջիկը, — հարցրեց նա:

— Գիւլին: Այդ աղջիկը գնում էր կախարդի մօտ, որ նրա թիլիսմաներով գրաւէ իր սիրականին:

— Ո՞վ ասաց քեզ: Դու արդէն նրա անունն էլ գիտես ...

— Նա ինքն ասաց:

— Բայց դու, Ֆարհատ, բաւականին սիլի-բիլի արեցիր նրա հետ... Շա՛տ խորամանկ ես...

— Դրուստն ասեմ, ինձ շատ դուր եկաւ Գիւլին:

— Նրա համար, որ իմ մատը կտրեց, հա՞:

Մարօի աչքերում ցոլաց նախանձի կայծը:

— Դրա համար չէ: Նա սիրուն աղջիկ է:

— Սարսա՛ղ...

— Ես քեզ ուզեցի բարկացնել, Մարօ:

— Առանց դրան էլ բարկացած եմ:

— Ին՞ձ վրայ:

— Հա՛: Ինչո՞ւ չթողեցիր սատկեցնէի նրան:

— Գիտե՞ս ինչ կանէին քեզ քրդերը:

— Կը սպանէին: Թող սպանէին: Մի օր պիտի մեռնեմ. բոլորը մէկ է:

— Յետոյ ես կը մնայի առանց Մարօի:

Նա ոչինչ չպատասխանեց եւ րոպէական լռութիւնից յետոյ հարցրուց.

— Հասօն ի՞նչ ասաց:

Ես պատասխանեցի, թէ Հասօն համաձայնեցաւ մեր ուխտագնացութեան համար, միայն ասաց, որ Խաթունին պէտք է մեզ հետ տանենք: Ես հարցրի, արդեօք ձեռքի վէրքն արգելք չէ՞ր լինի:

— Այդ ոչինչ, կտրածը շատ չէ, — պատասխանեց նա: — Որտեղի՞ց պատահեց այն անիծածը: Գիշերը վատ երազ էի տեսել, հիմա կատարուեց:

— Նա գնում էր կախարդի մօտ իր սիրականի համար թիլիսման գրել տալու:

— Հողը՛ նրա գլխին, նրա հայրը քրդերի մեծաւորն է, բայց ինքը սիրում է մի աղքատ որսորդի, նրա համար միայն, որ այն աղան լաւ խաղ է ասում եւ սիրուն աչքեր ունի: